ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 5
«ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-10/39» ԾԱԾԿԱԳՐՈՎ
ԳՆԱՆՇՄԱՆ ՀԱՐՑՄԱՆ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԻՍՏԻ

ք. Երևան **09.09.2019թ.**
Ժամը 14:20

Մասնակցում էին՝
Հանձնաժողովի նախագահ, գնահատման աշխատակազմի պատասխանատու՝
- ՀՀ ՊՆ ԿՇ և ԶԲՎ ԿԾԲ գլխավոր մասնագետ Ս. Սարգսյանը,
գնահատողներ՝
- ՀՀ ՊՆ ԿՇ և ԶԲՎ ԿԾԲ առաջատար մասնագետ Վ. Ղազարյանը,
Գնումները համակարգող՝
ՀՀ պաշտպանության նախարարության աշխատակազմի քարտուղարության ընդհանուր բաժնի առաջատար մասնագետ Մ.Ամիրյանը:

Քանի որ նիստին բացակայում էր ՀՀ ՊՆ ԿՇ և ԶԲ վարչության պետի տեղակալ Ա. Մուրադյանը, հետևաբար «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-10/39» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի հանձնաժողովի նախագահի լիազորությունները իրականացնում էր ՀՀ ՊՆ ԿՇ և ԶԲՎ ԿԾԲ գլխավոր մասնագետ Ս. Սարգսյանը:

«ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-10/39» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի հանձնաժողովի նիստի օրակարգը հաստատելու մասին.

(Մ.Ամիրյան)

1. Հայաստանի Հանրապետության պետական եկամուտների կոմիտեի կողմից ներկայացված համապատասխան տեղեկատվության քննարկման, մասնակցի՝ գնանշման հարցման ընթացակարգի հրավերով պահանջվող (նախատեսված) որակավորման պահանջներին իր համապատասխանությունը հիմնավորող փաստաթղթերի առկայության, դրանց գնանշման հարցման ընթացակարգի հրավերով սահմանված պահանջներին համապատասխանության և ընտրված մասնակցին հայտարարելու մասին.
2. Հանձնաժողովի հաջորդ նիստի անկացման օրը և վայրը որոշելու մասին.

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 2, դեմ՝ 0:

1 Հայաստանի Հանրապետության պետական եկամուտների կոմիտեի կողմից ներկայացված համապատասխան տեղեկատվության քննարկման, մասնակցի՝ գնանշման հարցման ընթացակարգի հրավերով պահանջվող (նախատեսված) որակավորման պահանջներին իր համապատասխանությունը հիմնավորող փաստաթղթերի առկայության, դրանց գնանշման հարցման ընթացակարգի հրավերով սահմանված պահանջներին համապատասխանության և ընտրված մասնակցին հայտարարելու մասին.

(Մ.Ամիրյան)

1.1 Քանի որ ՀՀ պետական եկամուտների կոմիտեի **03.09.2019թ.**-ին տրամադրած՝ ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 43-րդ կետի 3-րդ ենթակետով նախատեսված հարցման մասին տեղեկատվության համաձայն 1-ին տեղ զբաղեցրած մասնակիցը «ԻՄՊԵՔՍ» ՍՊԸ /հանդես է գալիս համատեղ գործունեության պայմանագրով «Կուբան Էքսպորտ» ՍՊԸ-ի հետ/ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ժամկետանց պարտավորություններ չի ունեցել, ուստի գնահատող հանձնաժողովը որոշեց մասնակցի ներկայացրած հայտարարությունը համարել իրականությանը համապատասխանող:

1.2 **29.08.2019թ.**-ին գնումների համակարգող Մ.Ամիրյանը Armeps.am համակարգի միջոցով ծանուցեց 1-ին տեղ զբաղեցրած մասնակցին հրավերով սահմանված ժամկետում և կարգով /3 աշխատանքային օրվա ընթացքում/ ներկայացնել ընթացակարգի հրավերի 2-րդ մասի՝ ընթացակարգի հայտը պատրաստելու հրահանգի 3-րդ կետով նախատեսված փաստաթղթերը՝ m.amiryan@mil.am էլեկտրոնային հասցեին: Սահմանված ժամկետում մասնակիցը ուղարկել է վերը նշված փաստաթղթերը:

«ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-10/39» ծածկագրով գնանաշման հարցման ընթացակարգի հրավերով ձեռք բերվող ապրանքի/ածուխ/ տեխնիկական բնութագրում նշվել է. **«Նախատեսվում է ջեռուցման նպատակով կաթսայատներում այրելու համար, /երկարաբոց գազային/ տեսակի՝ 5-100մմ չափի ածուխ»**:

Մասնակիցը ընթացակարգի Հավելված 3.1-ով նախատեսված ապրանքի տեխնիկական բնութագրում ներկայացրել է. **«ДО մարկայի ածուխ, չափսը 30-70մմ, կալորիականությունը՝ 4900-7630կկալ/կգ, համաձայն** ГОСТ 10742-71»:

09.09.2019թ. «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-10/39» ծածկագրով գնանաշման հարցման ընթացակարգի պատասխանատու ստորաբաժանման կողմից թիվ ՊՆ 035/1370 գրությամբ ստացված մասնագիտական

եզրակացության համաձայն մասնակցի կողմից ներկայացվող ապրանքի տեխնիկական բնութագրիը համարվում է ընդունելի, քանի որ ներկայացվող ածուխի չափերը ներառվում են 5-100մմ չափսերի մեջ, իսկ կալորիականությունն ավելի բարձր է:

09.09.2019թ. հիմք ընդունելով պատասխանատու ստորաբաժանման կողմից ներկայացված մասնագիտական եզրակացությունը և հանձնաժողովի անդամների կողմից ներկայացված գնահատման թերթիկները՝ հանձնաժողովը որոշեց մասնակցի որակավորման չափորոշիչները գնահատել «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-10/39» ծածկագրով գնանաշման հարցման ընթացակարգի հրավերի պահանջներին համապատասխան, վերջինիս հայտարարել ընտրված /հաղթող/ մասնակից և անգործության ժամկետի ավարտից հետո պայմանագիր կնքելու առաջարկ ներկայացնել:

1.3 Հանձնաժողովը որոշեց հաստատել «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-10/39» ծածկագրով ընթացակարգի արդյունքում պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարության տեքստը և հրապարակել «Գնումների մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի համաձայն:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 2, դեմ՝ 0:

2. Հանձնաժողովի հաջորդ նիստի անկացման օրը և վայրը որոշելու մասին.

(Մ.Ամիրյան)

«ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-10/39» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի արդյունքների ամփոփման նպատակով հանձնաժողովի նիստը հրավիրել գնման պայմանագրի կնքվելու, իսկ չկնքվելու դեպքում այդ հանգամանքը հայտնի դառնալու օրվան հաջորդող աշխատանքային օրը, ՀՀ ՊՆ նյութատեխնիկական ապահովման դեպարտամենտի ԳՓՁ վարչության նիստերի դահլիճում:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 2 դեմ՝ 0:

Գնահատող (ԳԱՊ)	_____	Ս. Սարգսյան
Գնահատող	_____	Վ.Ղազարյան
Գնումները համակարգող	_____	Մ.Ամիրյան